Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-293-

Ա. ԲՈԳԴԱՆՈՎ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ ՍԱՊՅՈՐԱ-ՔՈՂԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1932

-293-

18 DEC 2017

Գրոյիտարքներ բոլոր յերկրների, միացե՛ք

Մ. ԲՈԳԴԱՆՈՎ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՀՈՒԾԱՏԵՏՐ

ՍԱՊՅՈՐԱ-ՔՈՂԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Բ. Գ. Կ. Բ. ՀԱՐՏԱՐԱ-ԳԻՏԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1932

-ԲԿ[-

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՍՍ գրադարան
1-3346 գր

ԻՆՉ Է ՍԱՊՅՈՐԱ-ՔՈՂԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԸ

1. Վայրը, վարտեղ մարտ է մղվում, ազդում է զորքերի մարտական գործողությունների հաջողության վրա։ Նա կարող է հեշտացնել կամ դժվարեցնել մարտական խնդրի կատարումը։ Զանազան տեսակի ճարտարագիտական աշխատանքներով կարելի է վերացնել վայրի այն թերությունները, որոնք խանգարում են մարտ մղելուն։

2. Այդ աշխատանքների մի մասը ինքը հետևազորն է կատարում։ Ավելի բարդ աշխատանքները, որոնք առանձնահատուկ նախապատրաստություն են պահանջում (ամուր ապաստարաններ, հրամանատարական կետեր, դիտակետեր, ճանապարհներ, կամուրջներ և այլն), կատարում են ճարտարագիտական զորքերը։

3. Զորական ճարտարագիտական գործն այն ճարտարագիտական աշխատանքներն են, որ զորքերը պետք է ինքնուրույն կերպով կատարեն։ Զորական ճարտարագիտական գործը հետևազորի համար բաժանվում է սապյորական, քողարկային, ճանապարհային և անցարանային

մասերի, Թացի դրանից նրա մեջ է մտնում և դաշտային տնտեսական շինքերի կառուցումն։

4. Սապյորական գործի մեջ մտնում է թագըստոցների և արգելքների կառուցումը։ Քողարկային գործն ընդգրկում է մեր զորքերը և կառուցվածքները հակառակորդի աչքից ծածկելու յեղանակները և տալիս է նրանց դասավորման կոդ պատկերը։

5. Ամեն մի մարտիկ պետք է գիտենա սապյորա-քողարկային գործը և կարողանա այն կիրառել մարտական տարբեր պարագաներում։ Ճշտորեն կիրառելով սապյորա-քողարկային գործը, հետեվազորը կկարողանա նվազագույն կորուստներով հակառակորդին մեծամեծ վնասներ պատճառել։

6. Վայրին հարմարվելը, խրամատավորվելը և քողարկվելն այն միջոցներն են, որ ոգնում են հետեվազորին մարտական գործողությունների մեջ հաջողություն ձեռք բերել նվազագույն կորուստներով։ Մարտիկի վայրին հարմարվելն այն է, որ մարտիկը կարողանա՝

ա) այնպես տեղավորվել, որ հարմար լինի հակառակորդին գնդակոծել իր առջևում և կարելի լինի իր կրակով հարևանին ոգնել.

բ) հենարան գտնել հրացանի համար, որպես զի կրակի դիպկությունն ավելանա.

գ) ծածկվել հակառակորդի աչքից ու կրակից։

Խրամատավորվելն այն է, որ իրենց մոտ ունեցած ամրաշինական գործիքներով մարտիկները կարողանան զանազան թագստոցներ կառուցել։

2. ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

7. Ամրաշինական կոչվում է այն գործիքը, որը գործադրվում է խրամատավորվելու համար։ Դա լինում է փոքր՝ անձամբ կրելի և մեծ՝ սայլով կրելի։

Ամրաշինական փոքր գործիքը մարտական պարագայում գտնվում է մարտիկի վրա. մեծ գործիքը գտնվում է գումակում և միայն հատուկ պատվերի համաձայն բերվում է աշխատանքի վայրը։

8. Հետևակի փոքր՝ անձամբ կրելի ամրաշինության գործիքն է՝ փոքր թին և փոքր կացինը (նկար 1 և 2)։

Մեծ՝ սայլով կրելի ամրաշինության գործիքն է՝ մեծ թի (նկ. 3), թեթև և ծանր կացին, յերկոսին (թոխր ու մարկեղ, նկ. 4), լինգ (նկ. 5), մի՛ջակուռ սղոց (խղար, նկ. 6) և յերկաթալար (մավթուլ) կտրելու մկրատ (նկ. 7)։

9. Մաարերիր փոքր և մեծ թիու չափերը՝

վորպեսզի, խրամատ փորելիս, կարողանաս դրանց ոգտագործել վորպես չափ (գործիքների չափերը սանտիմետրերով՝ տես գծանկարներում)։



Նկ. 1. փոքր թիակ



Նկ. 2.

10. Ամրաշինության գործիքը պահպանիր ուշադիր, ինչպես հրացանը։ Աշխատելուց հետո դրանց հողից մաքրիր, սրբիր և յուղիր։ Ցուրտ յեղանակին թող, վոր գործիքը քրտնի, և ապա մաքրիր։

3. ՆՅՈՒԹԵՐ, ՎՈՐՈՆՔ ԳՈՐԾԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՍԱՊՅՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

11. Սապյորական գործի ընթացքում գործագրվում են՝ հող, ճիմ, քար, հող լցնելու պարկ, փայտ, վողորկ և փշոտ յերկաթալար, յերկաթակապեր, մեխեր։ Ճիմը՝ բուսահողի վերին շերտն է խոտով

և արմատիքով, կտրտվում և կանոնավոր կտորներով (40 սանտիմետր յերկարությամբ, 20 սմ.



Նկ. 3. մեծ թիակ.



Նկ. 4. յերկոսին (Թորբ ու մարկեղ)

լայնությամբ և 10 սմ. հաստությամբ), վորոնք կոչվում են կուռնձոր։

Փշալարը գործագրվում և արհեստական ար-

գելքներ շինելու համար։ Այդ փշալարի կոճը (կարժը) քաշն է 50 կիլոգրամ. կոճի վրա կա



Նկ. 5. լինգ.



Նկ. 6. միջնակաուը սղոց (խզաբ).

Նկ. 7. յերկաթալար (մավթալ կարելու մկրատ).

325 մետր փշալար։ Յերկաթակապերով փշալարն ամրացնում են ցցերին։

4. ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՁԻԳՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՄԱՐՏՈՒՄ.

12. Անզգուշ կարմիր բանակայինին հակառակորդը կարող է հայտաբերել մի շարք նշաններով, որոնք կոչվում են քողարկման նշաններ։

Այդպիսի նշանների թվին են պատկանում տեղում դասավորված ժամանակ—գլխի և ուսերի գծագրությունը, սպառազինման առարկաների, հանդերձանքի և հագուստեղենի փայլը, գլխի խիստ արագ բարձրացնելը, ձեռների խիստ արագ շարժումները. շարժման ժամանակ—ինչպես և տեղում դանված ժամանակ, վոտների ու ձեռների շարժումները, ամբողջ հասակով (առանց կռանալու) վաղելվազք կատարելը։

Գիշեր ժամանակ իրեն կարելի յե մատնել ամենից առաջ քայլերի ձայնով, խոսակցությամբ, զենքի և հանդերձանքի շաչյունով, այլ և ծխախոտի կրակով։

13. Խնամքով քողարկվիր տեղում դասավորվելիս։ Յեթե հագուստեղենի և հանդերձանքի այս կամ այն մասերը փայլփլում են, ապա վաղորդաք նրանց ծածկիր։

Անհրաժեշտ գործիք՝

ա) տեղանքի ամեն տեսակի անհարթությունները՝ փոսեր, առուներ, կոշտեր, թմբեր, բլրակներ, արկերից առաջացած ձագարներ և այլն.

բ) բուսականություն և զանազան տեղական առարկաներ՝ ծառ, թուփ, կոճղ, ցանկապատ, կանաչ խոտ, խոտի դեզ և այլն.

գ) տեղական առարկաների սովերը.

դ) այն տեղերը, վորոնց գույնը նմանվում է հագուստի գույնին։

Այդ տեղերը դրավիր այն հաշվով, վոր հնարավորություն ունենաս հարմարությամբ դիտել հակառակորդին, կրակել և անձամբ ծածկված մնալ հակառակորդի դիտողությունից։

14. Նույնպես խնամքով քողարկվիր տեղափոխությունների ժամանակ՝

ա) ընտրիր այնպիսի տեղեր, վորոնց գույնը հարմարվում է հագուստեղենի գույնին.

բ) աշխատիր գտնվել տեղական առարկաների սովերում.

գ) ծածկվիր տեղանքի անհարթություններով (թմբերով, բլրակներով), բուսականությամբ (թփերով, կանաչ խոտով, ցանքսով) և տեղական առարկաներով (շենք, քար, ցանկապատ), սա-

կայն միշտ հիշիր, վոր հակառակորդի հրետանին հեշտությամբ փորձնական կրակ է բացում այդ առարկաների վրա.

դ) հակառակորդից մոտիկ գտնվելիս, մի ծածկոցից մյուսը սողալով անցիր։

յե) բաց տեղում ճակատի յերկայնությամբ վազեվազք մի անիր.

զ) միանգամայն բաց տեղերը վազելով անցիր. վազեվազք անելիս գետնից արագությամբ բարձրացիր և նույնպես արագությամբ պառկիր։ Վազեվազք անելիս, հնարավորության չափ շատ կուացիր.

ե) բուսականությամբ ծածկված տեղում քողարկվիր խոտի, ծղոտի ոգնությամբ։ Շարժվելիս, հագուստեղենի և հանդերձանքի մեջ ճյուղեր խրիր. հագուստիդ և հանդերձանքիդ խոտե փընջեր կապիր։ Բաց տեղում այդպիսի բան մի անիր.

ը) առաջին իսկ հնարավորության դեպքում ոգտվիր կամուֆլյաժական և քողարկային խալաթներից և շլեմներից (նկ. 8, 9, 10)։

Կամուֆլյաժական խալաթը սովորական խալաթ է, վորն ունի շլեմ գլուխը ծածկելու համար. նա նախշված է զանազան գույնի խոշոր պուլտերով։ Քողարկային խալաթը (մասկ-խալաթը) խոտով

ծածկված տեղի տեսք ունի. դա բաղկացած է հենքից (թելի ցանց), որին ամրացնում են խարի փնջեր, ներկված շրջապատող վայրի գույնի համեմատ։

Նկ. 8. Բողարկային խալաթ (դրած և ածվում խոտով ծածկված տեղում).

Նկ. 9. Կամուֆլաժակոն խալաթ.

Բողարկող շեմը գլուխը ծածկելու համար է և պատրաստվում է միևնույն նյութից, ինչվոր բողարկային խալաթը։

թ) Լավ սարքիր և կապկպիր հագուստեղենի և հանդերձանքի բոլոր մասերն այնպես, որ լրխկլխկող և չխչխկող մասեր չլինեն։

Նկար 10.

ժ) Յեթե լուսարձակի ճառագայթի տակ ընկնես անմիջապես կանգ առ։ Յեթե քեզ վրա չե գալիս լուսարձակի ճառագայթը, արագությամբ պառկիր գետնին և հրացանդ իջեցրու, որ ավինի փայլը չերևա։

5. ԽՐԱՄԱՏԸ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՍԵՐԸ

15. Հրաձգային խրամատ կոչվում է այն ամենահասարակ թագատոցը հրաձիգների համար՝ որը՝

ա) հարմարություն է տալիս կրակելու համար (հենարան),

բ) հրաձիգներին ծածկում է հակառակորդի դիտողությունից և կրակից (փոսը և հողաթումբը) և

գ) հարմար հաղորդակցություն և ստեղծում ճակատի լերկայնությամբ։

Հրաձգային կամ գնդացրային բջիջ—խրամատ կոչվում է այն ծածկարանը, վորն անհատ հրաձիգները կամ գնդացրորդները են փորում ամրաշինության գործիքների օգնությամբ։

16. Ուսումնասիրիր և լավ իմացիր խրամատի մասերի անունները և նրանց ամենագլխավոր չափերը (նկ. 11)։

Խրամատի կամ բջիջի մասերն են, պատվար, փոս և թիկունքի պատվար (տրավերս)։



Նկ. 11 Խրամատի մասերը (կտրվածքը)

Պատվարը՝ թեք հողաթումբն է, դեպի հակառակորդի կողմն ուղղված։

Կրակի գիծը՝ պատվարի յեզրն է, վորտեղ դրված են հրաձիգների հրացանները և վորտեղից հրացաններով կրակում են։

Պատվարի հաստությունը՝ չափվում է հողաթմբի լայնությամբ։ Վորպեսզի հրացանի գնդակը չծակի անցնի պատվարի միջով, նրա հաստությունը միջին կարծրություն ունեցող գետնի մեջ $1^1/_2$ մետրից պակաս չպետք է լինի։

Պատվարի բարձրությունը՝ դա գետնի մակերեսույթից մինչև կրակի գիծն յեղած բարձրությունն է։

Թիկունքի պատվարը (տրավերս)՝ փոսի յետևի հողաթումբն է. ծառայում է հրաձիգներին թիկունքից պաշտպանելու համար արկերի կտորտանքներից և շրապնելի գնդակներից։

Պատոցը (բերմա)՝ այն յետքաշն է գետնի մակերևույթի վրա, վորը գտնվում է հողաթմբի և փոսի միջև՝ 10—15 սանտիմետր լայնությամբ. ծառայում է հողաթումբը փլվելուց պաշտպանելու համար և հեշտացնում է խրամատից դուրս ցատկելը. միաժամանակ ծառայում է մարտի ժամանակ փամփուշտ դարսելու համար։

6. ԱՆՀԱՏ ՀՐԱՁԻԳՆԵՐԻ ԽՐԱՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ.

17. ա) Յեթե ժամանակ ունես և բնական ծածկարան էլ չկա, սկսիր խրամատ փորել, բայց նախ դայիր, թե արդյոք վորևե տեղ չի խանգարում քո գնդակոծին։

բ) Առանձին հրաձգային բջիջը փորիր փոքր թիով։

գ) Հրաձգային բջջի փորելու տեղն ընտրիր այն հաշվով, որ հարմար լինի կրակ վարել և միաժամանակ լավ քողարկվել։

դ) Հրաձգային բջիջ փորելու համար պառկիր ձախ կողքի վրա, հրացանդ դիր քեզնից աջ՝ մեկնած ձեռքիդ լերկարությամբ, ավինով դեպի հակառակորդը, հանիր թին պատյանի միջից և խրիր գետնի մեջ։

Աշխատիր յերկու ձեռքով, սկզբում թին բռնիր ուղղահայաց, ապա թեք, տափուբիկով դեպի հակառակորդը (նկ. 12, 13, 14)։

յե) Աշխատելու ժամանակ հնարավորությանն չափ գլուխդ շարունակ ցած պահիր։

զ) Փորածդ հողը թափիր առաջ և հողաթումբ պատրաստիր քո առջևում։

18. ա) Յ թե պետք է խրամատ փորել հակառակորդի կրակի տակ, ապա փոսը (բջիջը) փորիր պառկած կրակելու համար։ Փորվածքի մեջ պետք է տեղավորվի իրանդ ու վոտներդ։ Փորվածքի խորությունն ու հողաթմբի բարձրությունը պետք է լինի անձամբ կրելի փոքր թիու տափուբիկի լերկայնության չափ (20 սանտիմետր) (նկ. 15)։

Նկ. 12. Մարտիկի դրությունը աշխատելու սկզբի մոմենտին.

Նկ. 13. Աշխատանքի սկիզբը (հիմ կարելը)

1-33468
Հ. Ս. Ս. Ռ. ԱՐԽԻՎ ԳՐԱՊԱԼԱՏ
ՀՍՍՌ

բ) Եթե հնարավորություն կա, փորվածքի երկայնությունն ու լայնությունը մեծացրու մեկ մետրի չափ, իսկ խորությունը մինչև 60

Նկ. 14. Ձիմի բարձրացնելը.

Նկ. 15. Խրամատ պատված կրակելու համար.

սանտիմետր։ Հողն սկզբում թափիր առվակ հողաթմբի վրա, իսկ հետո յետևդ, թիկունքի պատվար (տրավերս) ստեղծելու համար, կատանաս

բջիջ—խրամատ ծնկած կրակելու համար (նկ. 16)։

գ) Եթե խորությունը հասցնես մեկ մետրի չափ, կստանաս բջիջ-խրամատ փոսի հատակից կանգնած կրակելու համար (նկ. 17)։ Փոսի հա-

Նկ. 16. Խրամատ ծնկած կրակելու համար (տրամատը).



Նկ. 17. Խրամատ կանգնած կրակելու համար (կտրվածքը).

տակից մինչև պատվարի կրակի գիծը լեռած բարձրությունը հավասար է 1,40 մետրի և կոչվում է կրծքի բարձրություն։

19. ա) Աշխատիր բջիջ-խրամատն այնպես փորել, վոր քո աշխատելն ու բջիջը հակառակորդի աչքին աննկատելի մնան։

բ) Սկսիր պառկած փորել, անցիր նստած փորելուն այն ժամանակ, յերբ բավարար բարձրություն ունեցող ծածկարան կստեղծվի։

գ) Փորածդ հողն այնպես թափիր, վոր բարձր կույտ չստացվի։ Պատվարը շինիր հենց սկզբից վոչ բարձր, թեք հողաթմբի ձևով, վորը ձուլվի շրջապատի տեղանքի հետ։

դ) Բջիջը քողարկիր ձեռքի տակ յեղած նյութերով, նմանեցնելով շրջապատի տեղանքի տեսքին և գույնին. հակառակորդի դիտողությունից պատվարը ծածկիր ճյուղերով կամ խոտով։

7. ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑԻՐՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄՆ ՈՒ ԽՐԱՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ.

20. Գնդացիրը տեղում դասավորված ժամանակ՝

ա) տեղավորիր նրան վայրի ծալքերում (ձորեր և ձորակներ).

բ) գնդացիրն ու նրա համրանքը (համարները) տեղավորիր բուսականության և տեղական առարկաների յետևում. այդ տեղական առարկաներն ընտրիր այն հաշվով, վոր տռվևում ընկած վայրը լավ գնդակոծվի.

գ) գնդացիրը տեղավորիր սավերում կամ տեղանքի մութ ֆոնի վրա.

դ) ծառերի և թփերի ճյուղերից աշխատական դիմակ պատրաստիր։

21. Գնդացիրը տեղափոխելիս՝

ա) խուսափիր մարդկանց կուտակվելուց.

բ) ոգտվիր վայրի ծալքերից (ձորերից, ձորակներից և առուներից).

գ) գնդացիրը ծածկելու համար ոգտվիր բուսականությունից և տեղական առարկաներից։

22. Գնդացիրով հարմար կրակելու, այլ և զենդացիրը, նշանառուին և ոգնականին հակառակորդի աչքից ու կրակից ծածկելու համար պատրաստիր ծածկարան (գնդացրային բջիջ)։

Բջիջ-խրամատի համար լավ տեսած իր և զենդակոծ ունեցող տեղ ընտրիր՝ այն հաշվով, վոր հեշտ լինի գնդացիրը քողարկել։

Բջիջը փորելու համար ընկերոջդ հետ պառկիր այն տեղի յետևում, վորտեղ վորոշելես դնել գնդացիրը և սկսիր փոս փորել նույն յեղանակով, ինչպես վոր միայնակ հրաձիգն է խրամատավորվում։ Հողը թափիր առաջ, բայց այնպես, վոր գնդացրի հարթակի (պլոշչադկայի) վրա չթափվի։

Սկզբում բջիջը պատրաստիր պառկած կրա-

կելու համար։ Այնուհետև բջիջը խորացրու ծռնկած և փոսի հատակին կանգնած կրակելու համար (նկ. 18, 19, 20)։ Փոսը փորելուց հետո հավասարեցրու և մաքրիր գնդացիրի համար պատ-



Նկ. 18. Գնդացիր ային խրամատ պատկած կրակելու համար.



Նկ. 19. Գնդացրային խրամատ ծռնկած կրակելու համար.

Նկ. 20. Գնդացրային խրամատ կանգնած կրակելու համար.

ըստատ հարթակը, հավասարաչափ հարթացրու պատվարը և գնդացիրը դիր հարթակի վրա։ Գնդացրի խրամատը փորում են գնդացրային ջոկի մեկ լիրկու հրաձիգներ։ Մնացած համար-

ները շարունակում են կատարել մարտական խնդիրը։

3. ՀՐԱՁԻԳ ՋՈԿԻ ԽՐԱՄԱՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԲՈՂԱՐԿՈՒՄԸ.

23. Լրիվ տրամատի (պրոֆիլի) խրամատ կոչվում է այն խրամատը, որն ատիճան ունի հրաձիգների համար և փոս ունի անցուղարձի համար, որի ընդհանուր խորությունն է $1^1/_2$ մետր։ Փոսի խորությունն ատիճանից ցած կես մետր է։

24. Հակառակորդի կրակի տակ հրաձգային խրամատ (նկ. 21) փորիր հետևյալ կարգով

ա) փորիր հրաձգային բջիջ պատկած կրակելու համար.

բ) խորացրու և լայնացրու այն ծռնկած կրակելու բջջի ծավալի չափ.

գ) այնուհետև ծռնկած կրակելու բջիջը խորացրու փոսի հատակից կանգնած կրակելու բջջի ծավալի չափ.

դ) միացիր հարևանիդ բջջի հետ 60 սանտիմ. խորության փոսով (սողալով գնալու համար).

ե) այդ փոսը խորացրու մեկ մետրի չափ (խրամատի լերկայնությամբ կռացած գնալու համար).

գ) խրամատը այդ փոսը մինչև $1^1/_2$ մետր, ատիճան թողնելով հրաձիգների համար։

25. Հակառակորդից հեռու գտնված ժամանակ խրամատավորվելիս, խրամատի տեղն ընտրելուց և ծրելուց հետո, միանգամից սկսիր փորել ամբողջ խրամատը, առանց վերևում հիշված հաջորդականությունը պահպանելու։

Նկ. 21. Հրաձգային խրամատ (ընդհանուր տեսքը).

26. Խրամատը փորելիս պահպանիր քողարկման հետևյալ կանոնները՝

ա) Թույլ մի տուր, որ մոտիկում գտնվեն ավելորդ մարդիկ.

բ) խրամատի համար անհրաժեշտ նյութերը

(ճիմ, ձողեր, գերաններ, ճյուղեր՝ քողարկման համար) պատրաստիր ծածկված տեղում և աստիճանաբար բեր աշխատանքի վայրը.

գ) Նյութերի մնացորդներն անմիջապես հեռացրու.

դ) խրամատից մոտիկ ճիմ մի կտրիր, խոտը մի տրորիր, բուսականությունը մի վոչնչացնի.

յե) փորելու ընթացքում թույլ մի տա, որ հողի բարձր կույտեր գոյանան.

զ) կանաչով պատած տեղում խրամատ կառուցելիս պատվարը ծածկիր ճիմով։

9. ԾԱԾԿՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

27. Մարտում ծածկված հաղորդակցությունը կիրառվում է՝

ա) փամփուշտ և այլ ռազմամթերք մատուցելու համար.

բ) պարեն մատակարարելու համար.

գ) նեցուկները մոտ բերելու համար.

դ) զորամասերին փոխելու համար.

յե) կարգադրություններ փոխանցելու համար.

զ) վիրավորներին դուրս տանելու համար։

28. Վերոհիշյալ նպատակներով՝

ա) փնտռում են այնպիսի ուղիներ, որոնցով

կատարված շարժումներն անհնարելի լինեն հակառակորդի համար՝ ձորեր, ձորակներ, թփուտ.

Նկ. 22. Դիմակ-ցանկապատ յերկաթալարի վրա.

Նկ. 23. Խրամուղի՝ սողալով գնալու համար.

բ) սարքում են դիմակներ ճյուղերով հյուսված յերկաթալարի ցանկապատի ձևով (Նկ. 22)

գ) փորում են խրամուղիներ, վոր լինում են յերեք տեսակի՝ սողալով գնալու համար, կռացած

Նկ. 24. Խրամուղի՝ կռացած գնալու համար.

Նկ. 25. Խրամուղի՝ ամբողջ հասակով գնալու համար.

գնալու համար և ամբողջ հասակով շարժվելու համար (նկ. 23, 24. 25)։

Փոսի խորությունը լինում է՝ սողալով գնալու համար 60 սմ., կռացած գնալու համար 1 մետր, ամբողջ հասակով գնալու համար $1^1/_2$ մետր։

10. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ

29. Արհեստական արգելքները կառուցվում են հակառակորդին մեր հրացանային և գնդացիրային կրակի տակ կասեցնելու համար։

Նկ. 26. Փշալարի պատնեշ.

30. Ամենից հաճախ կառուցվում են հետևյալ արհեստական արգելքները՝ փշալարի պատնեշ (նկ. 26), փշալարի ցանց փայտե ցցերի վրա (նկ. 27), խաչափառք հեծաններ (նկ. 28) և վողնուկներ (նկ. 29)։

Բացի արհեստական արգելքների հիշված տեսակներից շինվում են նաև թակարդներ և սայ-



Նկ. 27. Փշալարի ցանց ցցերի վրա.



Նկ. 28. Խաչափառք հեծան.



Նկ. 29. Վոլնուկ.



Նկ. 30. Թակարդ.

Նկ. 31. Սայթաք.

թաքներ։ Այս արգելքների առավելությունը դրանց անհակատելիությունն է։

Ցեթեթ արհեստական արգելքներ կառուցելու շրջանում անտառ կա, ապա կտրած ծառերի վոստերը սրում և պատրաստում են անշարժ (նկ. 32) կամ շարժական (նկ. 33) արգելանտառ։



Նկ. 32. Անշարժ (տեղական) արգելանտառ. ներքևում ցույց է տրված ծառերը գետնին ամրացնելու յեղանակը։

Ծառերը դես դեն ցրելն ավելի դժվարացնելու համար, դրանց ցցերով ամրացնում են գետնին և պատում են փշալարով։

31. Արհեստական արգելքները կարելի յե քողարկել՝

ա) դասավորելով նրանց ցածր տեղերում, կարճ թփուտի յետևում, բարձր խոտի յետևում այն-

պես, վոր նրանք հակառակորդի համար նկատելի չլինեն.



Նկ. 33. Շարժական արգելանոց.

բ) գործադրելով այնպիսի նյութեր, վորոնց գույնը հարմարվում է շրջապատող վայրի գույնին. (ամռանը ցցերի գույնը մուգ պետք է լինի, ձմռանը՝ բաց գույնի):

32. Արհեստական արգելքները կարելի է ավերել հրետանային կրակով, տանկերով կամ պայթուցիկ լիցքերով (վառոդով): Ռմբակոծությունից հետո բացված անցքերում մընում են փաթաթված փշալարը և չչլաված լարերը: Գրոհելիս անցքը փնտրիր փշալարի մեջ, իսկ չչլաված լարերը կարատիր ցերկաթալարը կարելու մկրատով:

11. ՏԵՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

33. Ոգտագործիր արկից առաջացած ձագարը, առուն, վորպես պատրաստի թաքստոց, իսկ առաջին հնարավորության դեպքում հարմարեցրու դրան վորպես բջիջ-խրամատ:

34. Առանձին ցանկապատն ոգտագործիր վորպես դիմակ. բջիջ-խրամատը տեղավորիր դրա յետևում.

35. Քարե պատը բռնիր միայն այն դեպքում, յերբ դա տեսանելի չէ հակառակորդին:

36. Քարե շենքերը լիովին պատսպարում են հրացանային և գնդացրային կրակից, սակայն թշնամու հրետանին հեշտությամբ կարողանում է կրակել դրանց վրա, իսկ արկ դիպչելու դեպքում կորուստներն ավելանում են քարի կտորտանքների պատճառով:

37. Անտառում դասավորվիր վոչ թե նրա յեզերքում, այլ մի քիչ դեպի խորքը կամ 100 մետրի չափ յեզերքի առջևում. դրանով կդժվարեցնես հակառակորդի հրետանու փորձնական հրաձգությունը:

Անտառում խրամատի փոսն այնքան ել խոր

և լայն մի շինիր. պատվարը բարձր շինիր. պատվար պատրաստելու համար ոգտագործիր կոտրած ծառերը։

38. Քարքարոտ գետնի վրա պատվարը շինիր բերովի նյութից, փոս մի շինիր։

39. Ճահճի կամ թաց մարգագետնի մեջ փոս մի փորիր։ Կանդնելուց տեղում ձախ փորիր։ Պատվարը շինիր բերովի նյութից։

12. ՋԱՆԱՋԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

40. Հողային աշխատանքների ժամանակ (խրամատներ, խրամուղիներ, ապաստարաններ), յեթե գետինը փխրուն կամ հեշտ փլվող է, կոդերը պատիր ճիմով, հյուսացանցով, ձողերով, տախտակով (նկ. 34, 35)։

41. Հրաձգի գլուխը գնդակներից պաստպանելու համար պատվարի մեջ շինում են բաց կամ ծածկված հրակնատներ՝ փայտից, հողից կամ հողով լցված պարկերից (նկ. 36, 37)։

42. Արկի բեկորներից և գնդակներից պաշտպանվելու համար խրամատների, գնդացրային հարթակների, դիտակետերի և խրամուղիների գլխավերևում կառուցում են բեթեի ծածկացներ, շարաններ, ծածկեր, (նկ. 38)։ Դրանց պետք է

այնպես կառուցել, որ նրանք մեր գնդակոծին և հակառակորդի կողմը դիտելուն չխանգարեն։

Նկ. 34. Խրամատի կողի պատվածքը ձողերով.

Նկ. 35. Խրամատի կողի պատվածքը տախտակներով.

Վորպես նյութ ամենից ավելի շատ գործածական են տախտակը, ձողերը և հողը։

43. Արամատում հրապաշար, պարեն և ջուր պահելու համար առջևի կողմ մեջ շինում են



Նկ. 36. Ծածկված հրակնատներ.



Նկ. 37. Բաց հրակնատներ.

պատրանքներ, վորոնց փխրուն հողի դեպքում պատում են տախտակով, ձողերով (նկ. 39).



Նկ. 38. Ծածկ (կարվածքը).

Ն. 39. Պատրհանքներ խրամատում.

44. Ամեն տեսակի աշխատանք կատարելիս անպայման պահպանիր բոլոր կարգման միջոցները։

13. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎՃԵՌ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆ

45. Վորքան արագ կատարվեն սապյորա-քողարկային աշխատանքներն, այնքան հաջողությունն ավելի նվազ կորուստներով ձեռք կբերվի մարտում։

Հաստատ իմացիր սապյորա-քողարկային աշխատանքների հետևյալ նորմաները.—

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՄԻՋԻՆ (ԲՈՒՍԱԿԱՆ) ԳԵՏՆԻ ՀԱՄԱՐ, ՅԵՐԵԿՈՎ ԱՇԽԱՏԵԼԻՍ.

Աշխատանքների անունները	Փոքր թիվով	Մեծ թիվով
ա) Բջիջ-խրամատ պատված կրակելու համար . . .	10—15 րոպ.	—
բ) Բջիջ-խրամատ ծնկած կրակելու համար . . .	1—1½ ժամ	—
գ) Բջիջ-խրամատ փոսի հատակին կանգնած կրակելու համար	1¾—3½ ժ.	1—2¼ ժամ
դ) Հաստակ խրամատ հրաձիգ ջոկի համար փոսի հատակին կանգնած կրակելու համար, 18 մետր յերկայնությամբ . . .	4 ժամ	2¾ ժամ
ե) Նույնը, բայց լրիվ տրամատի	7½ ժամ	5 ժամ

Մեծ թվերի մեջ (ա, բ, գ կետերում) մտնում է այն ժամանակը, վորն անհրաժեշտ է փորելու, պատվարը հավասարեցնելու, քողարկելու և կողերը պատելու համար։

Սվագոտ հողում ժամանակը կարճանում, իսկ կավահողում յերկարում է մեկ յերրորդի չափով։

Մութ գիշերով փորելու ժամանակը միջին հաշվով յերկարում է յերկու անգամ։

46. Սոցիալիստական մրցման և հարվածայնության ճանապարհով ձգտիր բարձրացնելու աշխատանքների տեմպը և դերակատարելու այլ նորմերը։

Պրակտիկան ցույց է տվել, վոր բերված նորմաները կարելի յե դերակատարել, պահպանելով միաժամանակ աշխատանքների բարձր վորակը։



ՑԱՆԿ.

	Եջ.
1. Ի՞նչ է սապյորա-քաղարկայինՁ գործը	3
2. Ամրաշինական գործիքներ	5
3. Նյութեր, որոնք գործադրվում են սապյորական գործի ընթացքում	6
4. Առանձին հրաձիգների քաղարկումը մարտում .	9
5. Երամաքը և նրա մասերը	13
6. Անհատ հրաձիգների խրամատավորումը . . .	15
7. Ձեռքի գնդացիրների քաղարկումն ու խրամատավորումը	20
8. Հրաձիգ ջոկի խրամատավորումն ու քաղարկումն	23
9. Ծածկված հաղորդակցություններ	25
10. Արհեստական արգելքներ	28
11. Տեղական առարկաների հարմարեցնելը պաշտպանության համար	33
12. Զանազան աշխատանքներ	34
13. Սոցիալիստական մրցակցություն և հարվածայնություն	38

ԹԱՐԳՄ. Հ. ՄԿՐՏՉՅԱՆ
ԽՄԲ. Պ. ԱՔԱՅԱՆ

Գեհերատի Տպարան

Գրվիճ 7459 (Բ). Գրավեր 1311. Տիրաժ 4000.

ՀՀ Ազգային գրադարան
NL0977321

ԳԻՆԸ 10 կոպ.

1
3346

ПАМЯТКА КРАСНОАРМЕЙЦУ ПО САПЕРНО-МАСКИРОВОЧНОМУ ДЕЛУ

Госиздат ССР Армении
Эривань — 1932